ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 փետրվարի 2020թ. N 59-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ (ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ) ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետերի, հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 14-ի N 15-Ն որոշմամբ հաստատված կարգը և «ԷՍ ՋԻ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի 2020 թվականի փետրվարի 10-ի դիմումը, որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Ջրաբեր բնակավայրում կազմակերպել «ԷՍ ՋԻ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացրած Բյուրեղավան համայնքի Նուռնուս բնակավայրում գտնվող վանակատի (օրսիդիանի) երևակման տեղամասում արդյունաբերական պաշարների հայտնաբերման երկրաբանական ուսումնասիրությունների նախնական համաձայնության հայտի վերաբերյալ հանրային լսումներ:

2.Լսումները (քննարկումները) անցկացնել 2020 թվականի փետրվարի 28-ին ժամը 12:30-ին, Բյուրեղավան համայնքի Ջրաբեր բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում. հասցեն՝ գյուղ Ջրաբեր, 1-ին փողոց թիվ 13 վարչական շենք:

3.Բյուրեղավան համայնքի Ջրաբեր բնակավայրի վարչական ղեկավար Մուշեղ Հարությունյանին՝ անցկացնել հանրային լսումները (քննարկումները) և արդյունքների մասին ներկայացնել տեղեկություն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. փետրվարի 17
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 փետրվարի 2020թ. N 60-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՅԳԵՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-13-րդ և 22.1-րդ կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի, հաշվի առնելով, որ այգետնակը կառուցված է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, կառուցված չի ու չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ և հիմք ընդունելով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՋԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2018 թվականի հոկտեմբերի 09-ին տրված N ԱԲ-2100 արխիվային տեղեկանքը, ժառանգության իրավունքի վկայագիրը, շինարարական կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունն ու Ժորա Սերգեյի Հայրապետյանի դիմումը՝ որոշում եմ.

1.Աբովյանի շրջանի Նուռնուս այգետարածքի թիվ 7 տեղամասի թիվ 297 հասցեում գտնվող անշարժ գույքը վերահասցեավորել.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Կոտայք թաղամաս 2-րդ փողոց 297:

2.Ժորա Սերգեյի Հայրապետյանին (ծնված՝ 1956 թվականի հուլիսի 31-ին) սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Կոտայք թաղամաս 2-րդ փողոց 297 (ծածկագիր՝ 07-051-0102-0012) հասցեի 0.0500 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի

կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված բնակելի նպատակային նշանակության 45.4 քմ արտաքին (33.88 քմ ներքին) մակերեսով այգետնակը ճանաչել օրինական:

3.Հաստատել՝ սույն որոշման անբաժանելի մասը կազմող «ՔԱՂ ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տված ընդհանուր 0.0500 հեկտար մակերեսով վերոնշյալ հողամասի ու շինության հատակագիծը:

4.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. փետրվարի 17
գ. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 փետրվարի 2020թ. N 61-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի, հիմք ընդունելով Ռաֆիկ Վլադիմիրի Խաչատուրյանի դիմումը՝ որոշում եմ.

1.Կոտայքի մարզ քաղաք Բյուրեղավան 4-րդ շարք թիվ 29 հողամասի (վկայական 2526243, ծածկագիր՝ 07-003-0043-0022) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սարալանջ թաղամաս 4-րդ փողոց 29:

2.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. փետրվարի 17
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 փետրվարի 2020թ. N 62-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի՝ որոշում եմ.

1.Բյուրեղավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 77-Ն որոշման հավելվածի NN 2, 3 և 6 հատվածներում կատարել վերաբաշխում՝ համաձայն NN 1, 2 և 3 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. փետրվարի 18
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 փետրվարի 2020թ. N 63-Ա

ԱՐԱՐԱՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բյուրեղավան համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Անհատ ձեռնարկատեր Արարատ Մարտիրոսյանը (ՀՎՀՀ 43038863), հանդիսանալով տեղական տուրք վճարող սուբյեկտ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով սահմանված կարգով չի կատարել տեղական տուրքեր վճարելու պարտականությունները, ինչի կապակցությամբ 2020 թվականի փետրվարի 1-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ տեղական տուրքերի գումարների գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Բյուրեղավանի համայնքապետարանի վարչական իրավահախտումների վերաբերյալ գործերը քննող աշխատանքային խմբի արձանագրության և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական

սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը, և 4-րդ կետի՝ համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում օրենքով սահմանված կարգով տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ, և 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ համայնքի ղեկավարն առևտրի և ծառայությունների բնագավառում տալիս է ոգելից խմիչքների կամ ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվություն:

Քննարկվող տեղական տուրքի գումարը հանդիսանում է անհատ ձեռնարկատեր Արարատ Մարտիրոսյանի կողմից Կոտայքի մարզ, Բյուրեղավան համայնք, Բյուրեղավան քաղաք, Ջորավար Անդրանիկի փողոց 27/73 հասցեում գտնվող իրեն պատկանող առևտրի օբյեկտում ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվություն ստանալու համար սահմանված ժամկետում չվճարված և վճարման ենթակա տեղական տուրք՝ 56000 (հիսունվեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամ: Տեղական տուրքի համար հաշվարկված վճարման ենթակա գումարը կազմում է 56000 (հիսունվեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամ: Անհատ ձեռնարկատեր Արարատ Մարտիրոսյանը 2019 թվականի ընթացքում բազմիցս խոստացել է կատարել տեղական տուրքի վճարները, սակայն չի վճարել:

2019 թվական հունվարից մինչև 2019 թվականի դեկտեմբեր, բազմիցս Արարատ Մարտիրոսյանին զգուշացնելուց հետո, 2019 թվականի դեկտեմբերի 11-ին Բյուրեղավան համայնքի առևտրի և սպասարկման ոլորտում հսկողություն իրականացնող հանձնաժողովի կողմից կազմվել է արձանագրություն:

Հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2020 թվականի փետրվարի 1-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով անհատ ձեռնարկատեր Արարատ Մարտիրոսյանը, լինելով պատշաճ ծանուցված, վարչական վարույթի լսումներն չի ներկայացել (հիմք՝ 2020 թվականի հունվարի 20-ի փոստային անդորրագիրը):

Վարչական ակտն ընդունելու հիմնավորումը.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համաձայն՝յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր , այլ վճարումներ:

Տեղական տուրքերի վճարումները սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում տեղական տուրք վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս: Ելնելով վերոգրյալից և համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Տեղական

ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ, 58-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածների՝ *որոշում եմ.*

1.Անհատ ձեռնարկատեր Արարատ Մարտիրոսյանից հօգուտ Բյուրեղավան համայնքի բյուջե գանձել 56000 (հիսունվեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, որից 28000 (քսանութ հազար) Հայաստանի Հանրապետության դրամը Բյուրեղավանի համայնքապետարանի 900105202049 հաշվեհամարին՝ որպես 2019 թվականին չվճարված ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար տեղական տուրք, և 28000 (քսանութ հազար) Հայաստանի Հանրապետության դրամը 900105202304 հաշվեհամարին՝որպես 2019 թվականին չվճարված ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար տեղական տուրք:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Բյուրեղավան համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3.Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Բյուրեղավան համայնքի ղեկավարը:

5.Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկել անհատ ձեռնարկատեր Արարատ Մարտիրոսյանին:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա ընդունման մասին անհատ ձեռնարկատեր Արարատ Մարտիրոսյանին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. փետրվարի 19
գ. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 փետրվարի 2020թ. N 64-Ա

ՄԱՆՎԵԼ ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բյուրեղավան համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան. Անհատ ձեռնարկատեր Մանվել Մանուկյանը (ՀՎՀՀ 43051164), հանդիսանալով տեղական տուրք վճարող սուբյեկտ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով սահմանված կարգով չի կատարել տեղական տուրքեր վճարելու պարտականությունները, ինչի կապակցությամբ 2020 թվականի փետրվարի 1-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ տեղական տուրքերի գումարների գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը. Համաձայն Բյուրեղավանի համայնքապետարանի վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող աշխատանքային խմբի արձանագրության և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի

վարձավճարների գանձումն ու վերահսկումը, և 4-րդ կետի՝ համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում օրենքով սահմանված կարգով տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ, և 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ համայնքի ղեկավարն առևտրի և ծառայությունների բնագավառում տալիս է ոգելից խմիչքների կամ ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվություն:

Քննարկվող տեղական տուրքի գումարը հանդիսանում է անհատ ձեռնարկատեր Մանվել Մանուկյանի կողմից Կոտայքի մարզ, Բյուրեղավան համայնք, Բյուրեղավան քաղաք, Վազգեն Սարգսյան փողոց 21 շենքի դիմաց հասցեում գտնվող իրեն պատկանող առևտրի օբյեկտում ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվություն ստանալու համար սահմանված ժամկետում ամբողջությամբ չվճարված և վճարման ենթակա տեղական տուրք՝ 40000 (քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ: Անհատ ձեռնարկատեր Մանվել Մանուկյանը 2019 թվական նոյեմբերի 15-ին վճարել է 20000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ մնացած 20000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամը՝ մինչև 2019 թվականի դեկտեմբեր ամիսը վճարելու պայմանով, որը նրա կողմից չի կատարվել: 2019 թվական հունվարից մինչև դեկտեմբեր, բազմիցս Մանվել Մանուկյանին զգուշացնելուց հետո, 2019 թվականի դեկտեմբերի 11-ին Բյուրեղավան համայնքի առևտրի սպասարկման ոլորտում հսկողություն իրականացնող հանձնաժողովի կողմից կազմվել է արձանագրություն: Հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2020 թվականի փետրվարի 1-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով անհատ ձեռնարկատեր Մանվել Մանուկյանը, լինելով պատշաճ ծանուցված, վարչական վարույթի լսումներին չի ներկայացել (հիմք՝ 2020 թվականի հունվարի 20-ի փոստային անդորրագիրը):

Վարչական ակտն ընդունելու հիմնավորումը.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Տեղական տուրքերի վճարումները սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում տեղական տուրք վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Ելնելով վերոգրյալից և համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ, 58-րդ,59-րդ և 60-րդ հոդվածների՝ *որոշում եմ.*

1.Անհատ ձեռնարկատեր Մանվել Մանուկյանից հօգուտ Բյուրեղավան համայնքի բյուջե գանձել 20000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, որից 10000 (տասը հազար) Հայաստանի Հանրապետության դրամը Բյուրեղավանի համայնքապետարանի 900105202049 հաշվեհամարին՝ որպես 2019 թվականին չվճարված ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար տեղական տուրք, և 10000 (տասը հազար) Հայաստանի Հանրապետության դրամը 900105202304 հաշվեհամարին՝ որպես 2019 թվականին չվճարված ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար տեղական տուրք:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Բյուրեղավան համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3.Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Բյուրեղավան համայնքի ղեկավարը:

5.Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկել անհատ ձեռնարկատեր Մանվել Մանուկյանին:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա ընդունման մասին անհատ ձեռնարկատեր Մանվել Մանուկյանին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. փետրվարի 19
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 փետրվարի 2020թ. N 65-Ա

ՀՐԱՅՐ ՊԱՊՅԱՆ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բյուրեղավան համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան. Անհատ ձեռնարկատեր Հրայր Պապյանը (ՀՎՀՀ 81685332), հանդիսանալով տեղական տուրք վճարող սուբյեկտ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով սահմանված կարգով չի կատարել տեղական տուրքեր վճարելու պարտականությունները, ինչի կապակցությամբ 2020 թվականի փետրվարի 1-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ տեղական տուրքերի գումարների գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը. Համաձայն Բյուրեղավանի համայնքապետարանի վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող աշխատանքային խմբի արձանագրության և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-ին կետի՝ համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի

վարձավճարների գանձումն ու վերահսկումը, և և 4-րդ կետի՝ համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում օրենքով սահմանված կարգով տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ, 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը տալիս է համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն:
Քննարկվող տեղական տուրքի գումարը հանդիսանում է անհատ ձեռնարկատեր Հրայր Պապյանի կողմից Կոտայքի մարզ, Բյուրեղավան համայնք, Բյուրեղավան քաղաք, Ջորավար Անդրանիկի փողոց 2/83 հասցեում գտնվող իրեն պատկանող առևտրի օբյեկտում հեղուկ վառելիքի արտադրանքի իրացման թույլտվություն ստանալու համար սահմանված ժամկետում ամբողջությամբ չվճարված և վճարման ենթակա տեղական տուրք՝ 200000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ: Անհատ ձեռնարկատեր Հրայր Պապյանը 2019 թվական ընթացքում վճարել է 118000 (մեկ հարյուր տասնութ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ մնացած 82000 (ութսուներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամը՝ մինչև 2019 թվականի դեկտեմբեր ամիսը վճարելու պայմանով, որը նրա կողմից չի կատարվել: 2019 թվական հունվարից մինչև դեկտեմբեր, բազմիցս Հրայր Պապյանին զգուշացնելուց հետո, 2019 թվականի դեկտեմբերի 11-ին Բյուրեղավան համայնքի առևտրի և սպասարկման ոլորտում հսկողություն իրականացնող հանձնաժողովի կողմից կազմվել է արձանագրություն: Հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2020 թվականի փետրվարի 1-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով անհատ ձեռնարկատեր Հրայր Պապյանը, լինելով պատշաճ ծանուցված, վարչական վարույթի լսումներին չի ներկայացել (հիմք՝ 2020 թվականի հունվարի 20-ի փոստային անդորրագիրը):
2019 թվականի համար հաշվարկված տեղական տուրքի պակաս չվճարված և վճարման ենթակա գումարը կազմում է 82000 (ութսուներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ինչը 2019 թվականին չի վճարվել:

Վարչական ակտն ընդունելու հիմնավորումը.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր , այլ վճարումներ:
Տեղական տուրքերի վճարումները սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում տեղական տուրք վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Ելնելով վերոգրյալից և համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ, 58-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածների՝ ***որոշում եմ.***

1.Անհատ ձեռնարկատեր Հրայր Պապյանից հօգուտ Բյուրեղավան համայնքի բյուջե գանձել 82000 (ութսուներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ Բյուրեղավանի համայնքապետարանի 900105202346 հաշվեհամարին՝ որպես 2019 թվականին չվճարված հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար տեղական տուրք:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Բյուրեղավան համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Բյուրեղավան համայնքի ղեկավարը:

5. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկել անհատ ձեռնարկատեր Հրայր Պապյանին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա ընդունման մասին անհատ ձեռնարկատեր Հրայր Պապյանին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. փետրվարի 19
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 փետրվարի 2020թ. N 66-Ա

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՋՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 1/6/1 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՎՈՂ ՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի, հիմք ընդունելով Հայկ Համլետի Աղբալյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Հայկ Համլետի Աղբալյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Ջորավար Անդրանիկի փողոց թիվ 1/6/1 (վկայական N 09122014-07-0041) հողամասի հասցեն համարել չեղյալ և բաժանվող մասերին տրամադրել հասցեներ.

1) 0.008831 հեկտար (S1) մակերեսով բաժանվող մաս 1-ին՝
Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Ջորավար Անդրանիկի փողոց թիվ 1/6/1/1.

2) 0.008659 հեկտար (S2) մակերեսով բաժանվող մաս 2-ին՝
Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Ջորավար Անդրանիկի փողոց թիվ 1/6/1:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. փետրվարի 19
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք, ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 փետրվարի 2020թ. N 67-Ա

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ «ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻՆ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» ենթակետի, Աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով Հայկ Եղյանի 2020 թվականի հունվարի 23-ի դիմումն ու Բյուրեղավան համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 10-ի N 09-Ա որոշումը՝ ***որոշում եմ.***

1.Բյուրեղավանի համայնքային «Բարեկարգում և կանաչապատում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հայկ Կամունիկի Եղյանին 2020 թվականի փետրվարի 24-ից ազատել պաշտոնից:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. փետրվարի 21
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք, ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 փետրվարի 2020թ. N 68-Ա

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ «ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի, Աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 10-ի N 10-Ա որոշումն ու Արազ Անդրանիկի Վերդյանի 2020 թվականի փետրվարի 11-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Արազ Անդրանիկի Վերդյանին 2020 թվականի փետրվարի 24-ին նշանակել Բյուրեղավանի համայնքային «Բարեկարգում և կանաչապատում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար:

2.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Արազ Անդրանիկի Վերդյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. փետրվարի 21
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք՝ ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 փետրվարի 2020թ. N 69-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՊԱՀԵՍՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հողային օրենսգրքի 53-րդ և 56-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն, 2005 թվականի հունիսի 16-ի N 970-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումների և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի՝ *որոշում եմ*՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Նուռնուս գյուղի 07-051-0011-0030 ծածկագրով Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող բնակավայրերի նպատակային նշանակության այլ գործառնական նշանակության 0.04935 հեկտար մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված հասարակական նպատակային նշանակության 232.76 քմ ներքին (279.45 քմ արտաքին) մակերեսով պահեստը ճանաչել Բյուրեղավան համայնքի սեփականությունը:

2.Հասարակական նպատակային նշանակության 232.76 քմ ներքին (279.45 քմ արտաքին) մակերեսով պահեստը ճանաչել օրինական և կատարել պետական գրանցում՝ ըստ որոշման անբաժանելի մաս կազմող «ԵՐԻՑՈՒԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տված պահեստի և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագծերի:

3.Սույն որոշման 1-ին կետում նշված 0.04935 հեկտար մակերեսով բնակավայրերի այլ գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված՝ հասարակական կառուցապատման:

4.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Նուռնուս գյուղի 07-051-0011-0030 ծածկագրով 0.04935 հեկտար մակերեսով հողամասին և նրանում առկա 232.76 քմ. մակերեսով պահեստին տրամադրել հասցե. Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Գլխավոր փողոց 4-րդ փակուղի 1:

5.Պահեստը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, նրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

6.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Նուռնուս գյուղի 07-051-0011-0030 ծածկագրով 0.04935 հեկտար մակերեսով հողամասը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, ինչպես նաև չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք:

7.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

8.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. փետրվարի 21
ք. Բյուրեղավան

Հավելված 1
Բյուրեղավան համայնքի ղեկավարի
2020 թվականի փետրվարի 18 -ի N 62 – Ա որոշման

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N77 - Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Բաժին	խումբ	դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Տարեկան	Փոփոխ. + / -	Տարի
05	6	1	Շրջակա միջավայրի պաշտպանություն	0,0	+1000,0	1000,0
06	1	1	Բնակարանային շինարարություն	2000,0	-1000,0	1000,0

Հավելված 2
Բյուրեղավան համայնքի ղեկավարի
2020թվականի փետրվարի 18 -ի N 62 -Ա որոշման

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N77 - Ն ՈՐՈՇՄԱՆ N 3 ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Տողի N	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված	Տարեկան	Փոփոխ. + / -	Տարի
4213	Կոմունալ ծառայություններ	4213	3250,0	+1000,0	4250,0
4214	Կապի ծառայություններ	4214	2840,0	-20,0	2820,0
4241	Մասնագիտական ծառայություններ	4241	2060,0	-50,0	2010,0
4267	Կենցաղային նյութեր	4267	1250,0	+58,0	1308,0
4533	Այլ ընթացիկ դրամաշնորհներ	4639	2000,0	-1000,0	1000,0
4723	Պարտադիր վճարներ	4823	415,0	+12,0	427,0

Հավելված 3
Բյուրեղավան համայնքի ղեկավարի
2020թվականի փետրվարի 18 -ի N 62-Ա որոշման

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N77 - Ն ՈՐՈՇՄԱՆ N 6 ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Բաժին	խումբ	դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված	Տարեկան	Փոփոխ. + / -	տարի
05	6	1	Շրջակա միջավայրի պաշտպանություն, որից		0,0	+1000,0	1000,0
			Կոմունալ ծառայություններ	4213	0,0	+1000,0	1000,0
06	1	1	Բնակարանային շինարարություն, որից		2000,0	-1000,0	1000,0

			Այլ ընթացիկ դրամաշնորհներ	4639	2000,0	-1000,0	1000,0
08	2	3	Մշակույթի տներ, կենտրոններ, որից		17950,0	-	17950,0
			Կապի ծառայություններ	4214	200,0	-20,0	180,0
			Մասնագիտական ծառայություններ	4241	100,0	-50,0	50,0
			Կենցաղային նյութեր	4267	150,0	+58,0	208,0
			Պարտադիր վճարներ	4639	0,0	+12,0	12,0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ